

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|-----------------|-------------------------|--|---|----------------------------------|---|
| | Ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 13 | Ամենօրյա տաբատ ձմեռային | Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | 13. Ամենօրյա տաբատ ձմեռային - Գործվածքի մակերեսային խտությունը 220±5 գրամ/մ2, բաղադրությունը` 65±2% պոլիէսթեր, 35±2% բամբակ: Գործվածքի տեսակը` <<TWILL>>, ներկման մեթոդը` <<Ռեակտիվ>>, գույնը` մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն), կտորի գույնը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Տաբատը մշակված է գոտիով, առաջամասում կողային թեք ներկարված գրպաններով և ծնկակալներով: Գուլֆիկը մշակված է շղթայով, որը |

գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին մշակված է 5 կամրջակով՝ մեկը գոտկատեղի հետնամասի կարի վրա, և գոտու չափսը կարգավորող 2 ախլակներով, որոնք կոճկվում են 1 օղակով և 2 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Կողային հատվածներում ծնկամասից վերև, մշակված են ծավալուն եռածալ վրադիր գրպաններ՝ 20սմ լայնությամբ և 24սմ երկարությամբ, կափույրներով: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակապով, իսկ հետնամասից կոճկվում է գաղտնիկոճկվածքով 1 օղակով և 15մմ տրամագծով կոճակով: Գրպանի ծալքերի լայնությունը 4-5սմ, ներքևից 2սմ ամրակարված, իսկ գրպանի վերնամասը (բերնը) մշակված է 1սմ լայնությամբ զարդակարով: Տաբատի ետևամասի աջ կողմում ներկարված է 15X15սմ չափսի գրպան՝ կափույրով: Կափույրը կոճկվում է գաղտնի կոճկվածքով 1 օղակով և 15մմ տրամագծով կոճակով: Տաբատի ներդիրը մշակվում է առնվազն 200 գրամ

մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մզակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15սմ բարձրության վրա: Ներքին եզրերը մշակված են կապիչներով:

Չափսերը՝ չափս-հասակային սանդղակին համապատասխան: Փաթեթավորումը պիտակավորված արկղերով, արկղում յուրաքանչյուր տաբատ թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին:

Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող

| | | | | | |
|--|--|--|--|--|---|
| | | | | | <p>Է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության և ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից:</p> |
|--|--|--|--|--|---|

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом EЦДЦПЗР-ЦН-23/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|------------|------------------------|---------------|-------|----------------------------|----------------------------|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 13 | | | | | |